Ա. Մկրտչյանին
հաշվառել գրանցամատյանում
համ և տեղեկացնել 22 ՀԱՀԿ
և 22 ժողով Տարածքային
Յ.Յ. 29.04.2016թ

N19 29.04.16թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

✉ 2001 ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 22
E-mail: vanadzor.lori@mta.gov.am
info@vanadzor.am

Հեռ. 2-26-48
Ֆաքս / Fax 2-22-50

079 N. 2310«27» 04 2016թ

Ձեր N _____ առ «_____» _____ 2016թ.

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐԻ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ՊՐՆ Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գրիգորյան

Վանաձորի համայնքապետարանը ամբողջությամբ միանում է Տարածքային մակարդակով սոցիալական համագործակցության համաձայնագրին:

Ներկայացնում եմ ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Համայնքապետարանի վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը.

ա) ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարան,
բ) պետական ռեգիստրում գրանցման օրը՝ 26 փետրվար 1997 թվական,
պետական ռեգիստրում գրանցման համարը՝ N 01Բ943463,
գ) փաստացի գործունեությունը՝

- հասցեն՝ Տիգրան Մեծի 22,
- էլեկտրոնային փոստի հասցեն՝ info@vanadzor.am
- կայքի անվանումը՝ www. vanadzor.am,
- հեռախոսահամարը՝ 374 322 22648,

դ) ներկայացուցչի անուն ազգանունը՝ Աշոտ Կարապետյան
ե) իրականացված(վող) ծրագրերը՝

- Համագործակցություն «Սեյվ դը չիլդրեն»կազմակերպության հետ՝ LIFE (Լայֆ) ծրագրի շրջանակներում,

  «Ոչ աղետի հետևանքով անօթևան մնացած, փաստացի տնակային ավաններում բնակվող ընտանիքների բնակարանային պայմանների բարելավում» ծրագիր,
- «Վարձատրվող հասարակական աշխատանքներ»
- Վանաձորի նախկին տնակային ավանների բնակիչներին բնակարանային վարձավճարի տրամադրում
- «ՀՀ պաշտպանության և մարտական գործողությունների ժամանակ զոհված զինծառայողների և ազատամարտիկների ընտանիքներին ջեռուցման ծախսերը մեղմելու» ծրագիր,
- Ֆինանսական աջակցություն «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ առավել անապահով ընտանիքների և

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ
ՎԱՆԱՁՈՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ
«29» 04 2016 թ.
ՄՈՒՏՔ N 981 ԳՈՐԾ N _____

խոցելի անձանց սոցիալական, առաողջապահական և սննդի մատուցման ծառայությունների ծրագրերի կազմակերպման համար,

- Ֆինանսական աջակցություն «Հայկական Կարիտաս», բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ «Տաք ճմեռ միայնակ տարեցներին» ծրագրի իրականացման համար,
- Համագործակցություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վարչատնտեսական բաժնի տնօրինության հետ՝ Վանաձորի բարեգործական ճաշարանում շահառուների ուղղորդման հարցում,
- Համագործակցություն «Մանկական կենտրոն», «Խաչվող ուղիներ», «Օրրան», «Զանգակատուն», «ԱՌՄ» «Արարատ Առաքելություն» բարեգործական կազմակերպությունների հետ,
- Աջակցություն Հայրենական պատերազմի վետերանների խորհրդին, Հայրենական պատերազմի կին վետերաններին, ՀՀ Լոռու մարզի երկրապահ կամավորների միությանը, Հայաստանի խուլերի միավորմանը,
- Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին,

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԴԱՐԲԻՆՅԱՆ